ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

--------- 2021 թվականի №...Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի №452Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության պետական արարողակարգի ծառայության 2021 թվականի մարտի 4-ի №5103/7813-21 գրությունը, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության դեսպանությունը խնդրել է պարզաբանել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 16-ի №452Ա որոշմամբ Երևան քաղաքում ամրակցված արբանյակային կապի երկրային կայանի շահագործման համար տրամադրված ռադիոհաճախականությունների օգտագործման №1305 թույլտվության (այսուհետ՝ Թույլտվություն) պայմանների 12-րդ կետով ամրագրված դրույթների հիման վրա Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության դեսպանության գործողությունների հերթականությունը՝ նկատի ունենալով, որ կայանը նախատեսվում է տեղակայել Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության դեսպանության ծառայողական շինության տանիքի վրա, որը համապատասխանում է Ռուսաստանի Դաշնության տարածքում դիվանագիտական հարաբերությունների վերաբերյալ Վիեննայի կոնվենցիային,

բ) որ ի պատասխան Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2021 թվականի մարտի 17-ի №ԳԲ/34.2-Մ2-9/752-2021 գրության՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության պետական արարողակարգի ծառայությունը 2021 թվականի մայիսի 26-ի №5103/21531-21 գրությամբ տեղեկացրել է, որ Հայաստանի

Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության դեսպանությունը հայտնել է իր համաձայնությունը սույն որոշման նախագծի վերաբերյալ,

գ) որ ամրակցված արբանյակային կապի երկրային կայանի տեխնիկական նախագծում արտացոլվող տեխնիկական ցուցանիշներն արդեն իսկ ամրագրված են Թույլտվության պայմանների 4-րդ կետում, ըստ Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության դեսպանության կողմից ներկայացված աշխատանքային պարամետրերի և բնութագրերի, և

հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ, 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Թույլտվության պայմանների 12-րդ, 13-րդ և 14-րդ կետերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության դեսպանությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք.Երևան
----- 2021թ.